

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2021

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում .....	7
1.3. Ջրահեռացման համակարգ .....	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	9
1.5. Էներգահամակարգ .....	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	10
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>11</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	12
2.2. Հասույթ .....	12
2.3. Գանձում .....	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/ .....	14
2.5. Ջրաչափեր .....	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	16
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>17</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	21
3.5. Գոտիավորման աշխատանքներ .....	22
3.6. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն .....	25
3.7. 1-85 թեժ գիծ .....	26
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>27</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության բաժին</b> .....	<b>30</b>
5.1. Փաստաթղթերի մշակում .....	31
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ .....	31
5.3. Դասընթացներ/սեմինարներ .....	31
5.4. Բուժզննում .....	32
5.5. Համագործակցություն ՀՀ ԱԻՆ-ի մարզպետարանների հետ .....	33
5.6. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	33
5.7. Փորձաքննություններ .....	34
<b>6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>35</b>
6.1. Ինտերակտիվ համակարգ .....	36

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### Քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջան

● Էրեբունի փողոց 1շենքը և հարևանությամբ գտնվող սեփական տնատիրությունները սնող  $d=50$ մմ պողպատե ջրագիծը գտնվում էր քայքայված վիճակում, ինչի հետևանքով առկա էր ջրակորուստ: «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից  $d=50$ մմ  $L=45$ զձ/մ երկարությամբ ջրագիծը փոխարինվել է  $d=63$ մմ պոլիէթիլենային խողովակներով: Միացման կետում տեղադրվել է  $d=40$ մմ գնդիկավոր փական անհրաժեշտության դեպքում տեղային ջրագրկում կատարելու նպատակով:



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Նուբարաշեն 11փողոցի վերջնամասում գտնվող կոռոզիայի ենթարկված և քայքայված  $d=100$ մմ պողպատե ջրագծի  $L=100$ զձ/մ երկարությամբ հատվածը ներթափանցման միջոցով փոխարինվել է  $d=63$ մմ պոլիէթիլենային խողովակներով:

### Քաղաք Երևան, Շենգավիթ վարչական շրջան

● «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից Արշակունյաց պողոտա 4-րդ նրբանցքում գտնվող  $d=50$ մմ  $L=220$ զձ/մ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է  $d=63$ մմ պոլիէթիլային խողովակներով: Իրականացվել են անհատական միացումներ  $d=25$ մմ  $L=140$ զձ/մ ընդհանուր երկարությամբ,  $d=15$ մմ թվով 22 ջրաչափական սարքեր տեղադրվել են սահմանազատման կետում տեղակայված ջրաչափական դիտահորերում: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է  $d=50$ մմ  $L=250$ զձ/մ երկարությամբ քայքայված ջրագիծ, տնտեսվել է  $Q=3$ լ/վ ջրաքանակ:



### Վայոց Ձորի մարզ

● «Եղեգնաձոր» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող համայնք Գետափ, Չախ ափ թաղամասի թիվ 4-8 փողոցների ջրամատակարարումը իրականացվում էր  $d=250$ մմ «Ոստան» ջրատարից անհատական կամ թաղային ջրագծերով, ինչի հետևանքով ջրագծերում ջրի ճնշումը հասնում էր 12-14մթն: Բարձր ճնշման պատճառով թաղամասի ներքին ցանցի ջրագծերը, որոնք կառուցված էին մետաղական և պոլիէթիլենային տարբեր տրամաչափի խողովակներով, քայքայվում էին, առաջացնելով հաճախակի կրկնվող վթարներ: «Եղեգնաձոր» տեղամասի աշխատակիցների կողմից «Ոստան» ջրատարից միացված թվով 8  $d=20$ մմ և  $d=25$ մմ միացումներ խցափակվել են և Չախ ափ թաղամասի թիվ 4-8 փողոցների ջրամատակարարումը ներկայումս իրականացվում է 9-րդ փողոցի ջրագծից: Կառուցվել է  $d=90$ մմ  $L=400$ զձ/մ նոր ջրագիծ պոլիէթիլենային



խողովակներով, որտեղ ջրի ճնշումը պահպանվում է P=3-4մթն՝ ջրատարի վրա տեղադրված ճնշման կարգավորիչ փականի օգնությամբ: Թաղամասի ջրամատակարարման ներքին ցանցը ամբողջովին վերակառուցվել է d=200մմ-90մմ L=1100զծ/մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով, թվով 23 բնակիչ-բաժանորդի ջրաչափական սարքերը փոխարինվել և տեղադրվել են սահմանազատման կետում տեղադրված ջրաչափական դիտահորերում:

Կատարված լայնածավալ աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ 9լ/վրկ ջրաքանակ, կարգավորվել է ք. Եղեգնաձորի և համայնքի ջրամատակարարման գրաֆիկը, բացառվել է վթարավերականգնողական աշխատանքների ժամանակ իրականացնել «Ոստան» ջրատարի կանգառը:



### Քաղաք Երևան

● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից Նոր Նորք 3-րդ գանգված 19 հասցեում կառուցվել է d=250մմ L=90զծ/մ երկարությամբ նոր կոյուղագիծ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով և թվով 4 դիտահոր:



● «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից Բագրատունյաց փողոց 22/1 հասցեում d=200մմ L=14զծ/մ երկարությամբ կոտրված կերեմիկական կոյուղագիծը փոխարինվել է նորով:

Հոկտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	3042
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	60550
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	51015
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	18715
Ջրաչափական հանգույցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	62
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1479.3
Կառուցված ջրագիծ	մ	4690.2
Կառուցված կոյուղագիծ	մ	435.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	17
Փոխարինված փական	հատ	46
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	364
Մաքրված դիտահոր	հատ	545
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	18.9
<b>Վերացված վթարներ</b>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1307
Ջրահեռացման ցանցում	հատ	2139
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	466

Հոկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	966	1221	515

## 1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հոկտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	185	5	0	0	1	0	0	0	0	191
Փոխարինված	188	21	4	5	3	1	1	0	1	224
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	301	18	1	2	1	2	1	1	0	327
Ընդամենը	674	44	5	7	5	3	2	1	1	742

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 742 ջրաչափ: Կատարված աշխատանքների 91 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հոկտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1490	244	12
2	Սաշոոց	1360	217	90
3	Շահումյան	775	133	51.5
4	Ջեյթուն	680	215	0
5	Շիրակ	400	412	8
6	Արթիկ	0	79	12
7	Ապարան	0	25	0
8	Ալավերդի	1490	13	3
9	Աշոցք	240	0	84
10	Բերդ	0	10	48
11	Իջևան	690	38	0
12	Լոռի	2950	166	18
13	Նոյեմբերյան	0	18	0
14	Սպիտակ	100	11	0
15	Ստեփանավան	155	38	10
16	Թալին	0	10	80
17	Տաշիր	310	11	0
18	Չարենցավան	580	87	12
19	Աբովյան	2110	61	0
20	Հրազդան	790	103	26
21	Կենտրոն	380	320	4
22	Հյուսիս	110	2780	0
23	Հարավ	0	2300	50
24	Էրեբունի	0	215	8
25	Արմավիր	0	10650	0
26	Արտաշատ	0	2950	0
27	Էջմիածին	0	0	0
28	Աշտարակ	0	0	0
29	Արարատ	0	1215	0
30	Մասիս	0	1110	0
31	Գավառ	350	0	0
32	Սևան	170	2950	0
33	Մարտունի	0	0	0
34	Վարդենիս	280	0	0
35	Ճամբարակ	11	0	0
36	Դիլիջան	40	190	0
37	Վայք	205	95	0
38	Եղեգնաձոր	0	200	0
39	Ջերմուկ	0	0	0
40	Սիսիան	0	250	0
41	Գորիս	0	0	0
42	Կապան	896	90	0
43	Մեղրի	0	0	0
	Ընդամենը	16562	27206	516.5

## 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանի պոմպի արտադրողականությունը ընկել էր և չէր հասցնում ջուրը մղել: Պոմպը հորից դուրս բերելուց հետո պարզվեց, որ բանվորական անիվը կոտրվել է, իսկ հակադարձ փականը խցանվել է: Արդյունքում բանվորական անիվը փոխարինվեց նորով, իսկ հակադարձ փականը մաքրվեց և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

- Ջերմուկի կեղտաջրերի պոմպակայանում պոմպերը չէին անջատվում և հորից դուրս բերվելուց հետո պարզ դարձավ, որ պոմպերը խցանվել են: Պոմպերը մաքրվեցին և տեղադրվեցին: Խցանվել էին նաև հակադարձ փականները, որոնք ևս ապամոնտաժվեցին և մաքրվեցին:

- Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանում խցանվել էր խոշոր մասնիկների մամլիչը, որի հետևանքով Ֆասավել էր մամլիչի կաղապարը: Արդյունքում մաքրվեց մամլիչի խցանումը, վերանորոգվեց կաղապարը և կարգաբերվեց մամլիչի աշխատանքը, որի արդյունքում այժմ այն աշխատում է բնականոն ընթացքով: Փոխարինվեցին նաև օդամուղների ֆիլտրերը, որոնք ամբողջովին խցանվել էին:



Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	62,675	10.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	72,302	25.2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	168,808	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	142,404	21.6
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	132,700	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	14,728	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	10,043	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,800	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	28,250	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	1,896	0	0

## 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	70
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	13
Այցեր	2
Պոմպի տեղադրում	4
Պոմպի ապամոնտաժում	3
Պոմպի վերանորոգում	1



## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հոկտեմբեր ամսվա ընթացքում նորոգվել են թվով 4 մեքենայի շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 4 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 9 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփսեր, առանցքակալներ, կիսասոնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Փոխարինվել են թվով 46 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, անտիֆրիզ և քսայուղեր:

Թվով 8 մեքենայի մարտկոց փոխարինվել է նորերով:



Թվով 7 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 7 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 5 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 8 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Նորոգվել է թվով 4 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփսերը, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 6 մեքենայի վրա իրականացվել են գներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 3 մեքենա-մեխանիզմի վրա:

Թվով 7 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 8 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.11.2021թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 563,456 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2021թ. հոկտեմբերի ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	656,533	538,676	82,1
	Իրավաբանական անձ	30,022	24,780	82,5

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	730,078	600,446	82,2
	Իրավաբանական անձ	35,247	25,413	72,1

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն):

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել է տվյալների բազա է մուտքագրվել թվով 833 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գուզահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:


Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հոկտեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 3382 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 10.2021
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1346	1513	305	3164
	Իրավաբանական անձ	88	112	18	218
	Ընդամենը	1434	1625	323	3382



Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հոկտեմբեր ամսին փոխարինված 3382 ջրաչափերի մոտ 58%-ը (կամ 1948 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 176,586 մ<sup>3</sup> հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



### 2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հոկտեմբեր ամսին գանձումը կազմել է 2,218 մլն դրամ (97%):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև 2020թ. ապրիլ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝

փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հոկտեմբեր ամսին զերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները): Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հոկտեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 151 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 17,2 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ ռոք պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2021թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10113	1148930064	6830	659401105	158	20991281	3130	473781511	3986	396997330


Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 68 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.11.2021թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում նոյեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	8,549	2,130
Բնակիչ-բաժանորդներ	6,375	1,476
Իրավաբանական անձեր	2,174	654

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 289.8 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:



## 2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.11.2021թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	697,035	598,829	85.91	34,136	25,404	74.42
	Առանց ջրաչափի	33,043	1,617	4.89	1,111	9	0.81

Տվյալների բազայում 01.11.2021թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Առևտրային	868,886	390,742	44.97	38,002	10,513	27.66

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4191 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 3519 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2355	1930	81.9
գ.Պոռշյան	1589	1060	66.4
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5891	1843	32.3

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 9886, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 9258, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1385, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2129, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1339, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1892 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3936 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրազրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	291	163,659	25,705,530

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




### 3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի հոկտեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը Երևանում կազմել է՝ 96.7%, ինչը 0.1% պակաս է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն Երևան




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 49 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.


մ ք.Ծաղկաձոր, Կեչառեցու փ. Եկեղեցու մուտ



Շահումյան, Իսակովի պողոտա




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2021թ-ի հոկտեմբեր ամսին, 2020 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 162 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 193 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում.



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում Էլ.էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 16 850 ԿՎտ/ժ. (3.63%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

#### Ուսուսնասիրված հասցեներ

Հաշվետու ժամանակահատվածում ուսուսնասիրվել է 185 հասցե: «ՀԷՑ» ՓԲ ընկերությունից ձեռք է բերվել 3 տեխնիկական պայման: Պոմպակայանների հոսանքի ծախսի գրաֆիկների ուսուսնասիրության արդյունքում 2 պոմպակայաններում հայտնաբերված խնդիրները վերացվել են: Թվով 27 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսուսնասիրություններ, որի արդյունքում թվով 14 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

#### Ինվերտորների տեղադրում

● Չորս հասցեում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով:


#### Ինվերտորային պոմպի տեղադրում

● Թվով երկու հասցեում նախկին մաշված պոմպերի և ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերի փոխարեն տեղադրվել են նոր ինվերտորային պոմպեր:

#### Լուսավորության մոնտաժում

● Թվով 13 հասցեներում վերականգնվել է տարածքի լուսավորությունը, մոնտաժվել են նոր լուսարձակները:

● Տեղադրված ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 10,924 կՎտ.ժ կամ 14.35%:




**Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ**

● Հաշվետու ժամանակահատվածում 21 խոշոր պոմպակայաններում էլեմատակարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


Հոկտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն նվազել է 177, 416 ԿՎտ/ժամ (16.25%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա**




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 149,325 ԿՎտ.ժ/ամիս կամ 7,18 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա**



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն նվազել է 213 101 ԿՎտ.ժ կամ 5,05 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա**





### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են հոկտեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Կառուցված կոյուղագծեր	մետր	174
Շահագործումից հանված կոյուղագծեր	մետր	174
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	112
Գյումրի քաղաքի կոյուղագծերի թվայնացում	կմ	86,65
Երևան քաղաքի կոյուղագծերի թվայնացում	կմ	1757,29
Մարզային կոյուղու երկարությունը թվայնացումից հետո	կմ	1364,97
Երևանի հիդրանտների տվյալների բազայի ճշգրտում և լրացում	քաղաք	1
Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքի թվայնացում ԱՏՀ-ում, թվայնացվել են ջրագծերը, փականները, դիտահորերը և կազմվել է համապատասխան տվյալների բազա	քաղաք	1
Լոռու մարզի Մեղովկա գյուղի և Ախթալա քաղաքի թվայնացում ԱՏՀ-ում	մարզ	1
Երևան քաղաքի տարբեր համայնքների ջրագծերի թարմացումներ	քաղաք	1
Շիրակի մարզ Ազատան գյուղ, Լոռի մարզ Ալավերդի քաղաք և Սարչապետ գյուղ ԱՏՀ անցկացված համայնքների տվյալների միավորում	մարզ	1
Շիրակի մարզի Ախուրյան գյուղի շինությունների շերտի ստեղծում	գյուղ	1
Արթիկ քաղաքի տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	քաղաք	1
Կենտրոն տեղամասի վթարների քարտեզագրում և տվյալների բազայում մուտքագրում ԱՏՀ-ում 75 վթար ջրային ցանցի վերաբերյալ և 16 վթար կոյուղու ցանցի վերաբերյալ	վթար	91
Իրավաբանական բաժնորդների կետերի ուղղում	կետեր	14
Ֆիզիկական բաժնորդների կետերի ուղղում	կետեր	319
Բազայում նոր ֆիզիկական կետերի ավելացում	կետեր	23
Բազայում նոր իրավաբանական կետերի ավելացում	կետեր	18
Պոմպակայանների ակտիվների գնահատում դաշտային այցելության միջոցով	պոմպակայան	14
Հացառատի պ/կ ակտիվների գնահատման աղյուսակների լրացում և ակտիվների գնահատականների ստացում	պոմպակայան	1
Համայնքների թեմատիկ շերտերի թվայնացում և տվյալների բազայի լրացում, տարածական տվյալների կոնվերտացիա AutoCAD համակարգից ArcGIS	համայնք	34
Համայնքների ջրային ցանցի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում և թարմացում՝ ըստ կատարողական գծագրերի: Հիդրավիլի մոդելներ ստեղծում ԱՏՀ-ի հիման վրա:	համայնք	21
Երևան քաղաքի ջրային ցանցի թարմացումներ՝ ըստ ԵՋԲՕ-ի կատարողականների տարբեր տեղամասերի փոփոխություն	փոփոց	30
Էրեբունի տեղամասի վերաբերյալ ջրային ցանցի տվյալների բազայի թարմացումներ՝ մոտավորապես 60%	տեղամաս	1

### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

#### Արարատյան ջրատար

Առավել արդյունավետ աշխատանքի համար ջրատարն անջատվել է Արզական-Խարբերդ ջրատարից և Էրեբունի օդանավակայանի մոտ կառուցվել է ≈30մ միացում չգործող Յմ երկարությամբ ջրատարից, որը նախկինում միացված էր Արարատյան թիվ 1 ջրատարին: Արդյունքում Արարատյան պ/կ-ից մղված ջրաքանակն ուղղորդվելու է Խարբերդ ՕԿԶ:



**Արին-Բերդ-Խարբերդ**

Ջրատարի վրա հայտնաբերվել է երկու վթար, որոնց գումարային արտահոսքը կազմել է  $\approx 7$ լ/վ: Դրանք վերացվել են Շենգավիթ ՇՏ-ի կողմից:



**Արզնի 1**

Ջրատարի վրա Գետամեջ գյուղում անհատական միացման կետում առաջացել էր վթար  $\approx 5$ լ/վ: Ջրատարի այդ  $D=900$ մմ թուջե հատվածում խամուրֆ փտել էր: Այն վերանորոգվել է Արաբկիր ՇՏ-ի ուժերով:

**Ապարան-Երևան**

Ջրատարի կանգառ կազմակերպելուց հետո, օգտվելով ջրատարում գրոյական ճնշման հանգամանքից, փոխարինվել են 2 վթարված ու չաշխատող օղահեռ փականներ:




**Ոսկեթաս**

Կատարվել է ուսումնասիրություն Ոսկեթասի համակարգում:

**3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

**Քաղաք Գյումրի**

● Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրություն է կատարվել Գյումրի քաղաքի Անի թաղամասի Տրդատ Ճարտարապետ փողոց 9-րդ շենքի բակում առկա ջրագծի վրա՝ գաղտնի վթար հայտնաբերելու նպատակով: Այն ի հայտ էր եկել ջրաշինարարների կողմից նոր ջրամատակարարման ցանց անցկացնելու ժամանակ խրամուղու փորման ընթացքում: Ուսումնասիրություններով պարզվել է, որ այն հին չգործող ջրագիծ է և ենթակա է խցափակման: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է  $D=50$ մմ,  $L=70$ մ պողպատե ջրագիծ: Տնտեսվել է  $Q=2$  լ/վ ջրաքանակ:





## Գյուղ Վարսեր

● Վարսեր գյուղում կատարած ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար 1-ին փողոցով անցնող  $D=110$  մմ պ/է ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q=10$ լ/վ ջրաքանակ:



## Գյուղ Չկալովկա



● Չկալովկա գյուղում ջրաքանակի չափումներից հետո  $63$ մմ պ/է ջրագծի վրա հայտնաբերվել է վթար, ինչպես նաև  $1$  ապօրինի միացում: Վթարը վերացնելուց և ապօրինի ջրագծի խցափակումից հետո տնտեսվել է  $Q=2$ լ/վ ջրաքանակ:

● Չկալովկա գյուղում կատարած ուսումնասիրություններից հետո հայտնաբերվել է  $1$  վթար՝  $2$ լ/վ քանակությամբ  $63$ մմ պ/է ջրագծի վրա,  $1$  ապօրինի ջրամիացում՝  $4$ լ/վ քանակությամբ, որը լցվում էր ջրաբեհայման համար նախատեսված ջրամբար և  $1$  անհայտ, պողպատե միացում՝  $150$ մմ տրամագծով,  $2,5$ լ/վ ջրաքանակով: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում Հացառատ-Լճաշեն ջրատարի վրա՝ Լճաշեն գյուղի մուտքագծի մոտ հայտնաբերվել է  $Q=10$ լ/վ քանակությամբ վթար:



## Քաղաք Հրազդան

● Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասը սնուցող ջրագծի վրա գտնվող ՃԿՓ-ն կարգավորելուց հետո տնտեսվել է  $Q \approx 3$ լ/վ ջրաքանակ: Հրազդան քաղաքում կատարված աշխատանքների արդյունքում Միկրո Պ/Կ-ի ելքի ջրաքանակը նվազեցվել է  $Q = 6-7$ լ/վ-ով:



## Մասիս տեղամաս

● Արարատյան  $1/2$  պոմպակայանից դեպի Խարբերդի ՕԿՋ գնացող  $D=400$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել է վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 5$ լ/վ ջրաքանակ:





## Քաղաք Երևան

● Բաղրամյան 68 շենքի մոտ կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար՝  $Q=4\text{լ/վ}$  ջրաքանակով:



● Նոր Նորք 2-րդ զանգվածում նոր տեղադրված  $D=100\text{մմ}$  ՃԿՓ-ի շնորհիվ տնտեսվել է  $Q=3\text{լ/վ}$  ջրաքանակ:



● «Արին Բերդ» ՕԿՁ-ի շրջակայքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է թվով 2 վթար՝ առաջինը  $Q=2\text{լ/վ}$ , իսկ մյուսը՝  $Q=4\text{լ/վ}$  ջրաքանակով:



● Շենգավիթ տեղամասի հետ համատեղ աշխատանքների արդյունքում Խարբերդի Անտառային թաղամասը սնող ջրագծի վրա հայտնաբերվել է գաղտնի վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է  $Q = 23\text{լ/վ}$  ջրաքանակ:



## Գյուղ Մերձավան

● Կատարած ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար դեպի Մերձավանի գորամասեր գնացող  $D=150\text{մմ}$  թուջե ջրագծի վրա: Խցափակվել է  $D=50\text{մմ}$  տրամագծով անհայտ ուղղությամբ գնացող ջրագիծ: Արդյունքում տնտեսվել է  $Q=8\text{լ/վ}$  ջրաքանակ:





### 3.6 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.


**Քաղաք Մեղրիի** Ագարակ մ/կ-ում հեղուկ քլորի անխափան աշխատանքն ապահովելու համար տեղադրվել է հեղուկ քլորի համակարգի նոր վակուում կարգավորիչ:



**Գյուղ Ալափարսի** Ալափարս ք/կ-ում հեղուկ քլորի անխափան աշխատանքն ապահովելու համար փոխարինվել է հեղուկ քլորի 0,5 կգ ինժեկտորը:



**Քաղաք Վանաձորի** Կարմիր Աղեգի քլորակայանում փոխարինվել է հեղուկ քլորի համակարգի նոր վակուում կարգավորիչը և ALLDOS փականը՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար:



**Քաղաք Հրազդանի** Մաքրավան 2 քլորակայանում փոխարինվել է հեղուկ քլորի համակարգի վակուում կարգավորիչը հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար:



**Քաղաք Սպիտակի** Ջրաշեն քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել են հեղուկ քլորի սարքավորումները:

**Քաղաք Իջևանի** Քարքարուտ քլորակայանում շինարարական աշխատանքների հետևանքով հեղուկ քլորի կոնտեյները ապամոնտաժվել է, ինչի արդյունքում ջրին անխափան քլորը կապահովվի:



**Գյուղ Ֆանտանի** «Ֆանտանի» քլորակայանում խափանվել է հոսանքի տատանման հետևանքով 60լ/ժ դոզավորման պոմպը, որը փոխարինվել է նոր վերանորոգված դոզավորման պոմպով, ինչի արդյունքում ցանցն ապահովվել է քլորով:

**Գյուղ Ֆանտանի** քլորակայանում մոնտաժվել են հիպոքլորիդի հաբի ապամոնտաժված քլորագծերը:



**Քաղաք Դիլիջանում** ՊԿԱԾ-ով հատկացված ֆինանսական միջոցների հաշվին կապալառու կազմակերպության կողմից հիմնովին վերանորոգվել է «Ֆրոլովո» ՋՄԿ-ն սնուցող Ֆրոլովո գետային ջրընդունիչը, ինչի արդյունքում պահպանվել է սանիտարական գոտին, նվազեցվել են ջրակորուստները, փոխարինվել են անսարք տեխնոլոգիական փականները և պահպանվել են երկաթբետոնե կառուցվածքները:

**Քաղաք Ագարակում** «Ագարակ» խմելու ջրի մաքրման կայանում հետագա շահագործման համար ոչ պիտանի քլորաջրի տրման քայքայված խողովակաշարը փոխարինվել է նորով, ինչի արդյունքում վերացվել է քլորաջրի կորուստը:



**Քաղաք Կապանի** «Չանախչի» ՋՄԿ-ում թվով 2 կոնտակտային ջրամբարի մտոցների կոռոզիայի ենթարկված 4 հատ մետաղական ծածկերը փոխարինվել են նորերով՝ սանիտարական նորմերին համապատասխան:

**Քաղաք Վանաձորի** «Լոռի» ՋՄԿ-ի տեխնոլոգիական մասնաշենքի սրահներում մոնտաժվել են հոսանքալարեր և տեղադրվել են լուսավորության համար անհրաժեշտ էլ. սարքավորումներ:

### 3.7 1-85 ԹԵԺ ԳԻԾ

#### 185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 35648 զանգ, որից առևտրային բնույթի զանգերը՝ 11270: Երևան քաղաքի համար եղել է 9039 զանգ:
- Հոկտեմբեր ամսվա Երևանի ցուցանիշը կազմել է 80.2 %, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2231 զանգ (19.8%): Շահագործման վերաբերյալ ստացվել է 24378 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 18130 զանգ (74.4%), իսկ մարզերինը՝ 6248 զանգ (25.6%):

<b>Առևտրային</b>	<b>Ընդամենը</b>	<b>11270</b>
	<b>ԵՐԵՎԱՆ</b>	9039
	<b>ՄԱՐԶԵՐ</b>	2231
<b>Շահագործում</b>	<b>ԵԱՀԱԿԱՐՏՈՒՄ</b>	<b>24378</b>
	ՀԱՐԱՎ	9951
	Շենգավիթ	1622
	Կենտրոն	1561
	Հյուսիս(Ավան, Լոր, Լորր)	1716
	Էրեբունի	2333
	<b>Պոմպ</b>	602
	Մարզեր	2117
	<b>այդ թվում Կոյուղու վթար</b>	58
	<b>այդ թվում Դիտանորի խցանում</b>	2873
	<b>ԶՅՈՒՄԻՍ</b>	<b>14427</b>
	Արարկիր	2434
	Քանաքեռ-Զեյթուն	1617
	Մաշտոց	3698
	Շահումյան	1747
	<b>Պոմպ</b>	800
	Մարզեր	4131
	<b>այդ թվում Կոյուղու վթար</b>	112
	<b>այդ թվում Դիտանորի խցանում</b>	3781
	<b>Ընդամենը</b>	<b>35648</b>

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ










տանում նոր, հեռանկարային կադրերի ընտրության մասին:

Իսկ ֆրանսիական Վեոլիա Գրուպի հաղթանակը Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդի ջրամատակարարման համակարգի կառավարման մրցույթում ևս մեկ առիթ հանդիսացավ հանրությանը հիշեցնելու, որ մեր ընկերությունը Վեոլիայի ընտանիքի մաս է հանդիսանում, ապրում է ընդհանուր հետաքրքրություններով և ունի նույն արժեհամակարգը:

Բնականաբար, այս ընթացքում ՀԿԲ-ի կողմից կատարվել են նաև ընկերության տնօրինության բոլոր հանձնարարությունները, որոնք առնչվում են ինչպես ներհամակարգային խնդիրներին, այնպես էլ պատկան պետական մարմինների հետ հաղորդակցությանը, սպառողներից ու լրատվամիջոցներից ստացվող դիմում-բողոքներին ու հարցումներին:

Այս բոլոր հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia\_AM և youtube Veolia Jur էջերում:

#Վեոլիա Գրուպը 30-ամյա կոնցեպտի պայմանագիր է կնքել Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդի ջրամատակարարության տնօրինման, պատակման և կառավարման վերաբերյալ: Նույն 1,2 միլիարդ ամերիկյան դոլարի բնակչությանը գրեթե կիսին ջերմություն և սառը մատակարարելու մասին է, որից այդ ընթացքում ակնկալվում է 13,4 միլիարդ եվրո կկանոն:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



### 5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Մշակվել է «1000 կգ և ավել բեռնաբարձությամբ ամբարձիչ սարքավորման տեխնիկապես սարքին վիճակի և անվտանգ շահագործման պատասխանատու անձի որակավորման» դասընթացի պրեզենտացիայի նյութը:

### 5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանուժներից ՈԱԱ բաժնին են ներկայացվել կառուցվածքային ստորաբաժանուժների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:

● Շարունակվել են Ընկերության ստորաբաժանուժներին տրամադրվել համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ:

### 5.3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱԼՆԵՐ

● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջները Ընկերության Երևան և Հարավ Շահագործման Տնօրինությունների թվով 39 աշխատողի համար Բաժինը կազմակերպեց և իրականացրեց «Անվտանգության մշակույթ և երթևեկությունն աշխատավայրում» առկա դասընթացը:



● Բաժնի պետը մասնակցեց Գրուպի կողմից կազմակերպված «Համապատասխանության ծրագիր 2021» հեռավար դասընթացին ավարտին ստանալով մասնակցության սերտիֆիկատ:

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ և 254-րդ հոդվածների, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Վտանգավոր քիմիական նյութերի տեղափոխում, պահեստավորում և գործածում» ԲՌԿ ստանդարտի պահանջներով և հիմք ընդունելով Ընկերության «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և ադմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները, քաղաք Երևանում, Դիլիջանում և Լոռիում բաժնի կողմից կազմակերպվեցին և իրականացվեցին


▶ «Քլորավորող օպերատորի մասնագիտական որակավորման» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթաց և գիտելիքների ստուգում և

▶ «Վտանգավոր քիմիական նյութերի հետ աշխատանքին ներկայացվող ԲՌԿ ստանդարտի պահանջներ» առկա դասընթացները Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 56 աշխատողի համար:





*2020-2021թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ*



### 5.4. ԲՈՒԺՁՆՆՈՒՄ

● ՈԱԱ բաժինը, առաջնորդվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 27 մարտի 2003 թվականի N 347-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, 2021 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ «Մեդլայն» բժշկական կենտրոնի կողմից պայմանագրային հիմունքներով իրականացրել է խմելու ջրի մաքրման, վարակազերծման և ջրամատակարարման ցանցի սպասարկման աշխատանքներում անմիջականորեն ներգրավված Ընկերության համապատասխան մասնագիտությունների 656 աշխատողի առողջական վիճակի դինամիկ հսկողության, վարակիչ և մակարուծային հիվանդությունների տարածման կանխարգելման և հիվանդությունների հայտնաբերման նպատակով տարեկան պարտադիր թերապևտիկ զննություններ և լաբորատոր հետազոտություններ և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկների վարման գործընթացը:


● Ընկերությունը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 15/07/2004 թ. N1089-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հաշվետու ամսում պայմանագրային հիմունքներով «Երևանի թիվ 1 պոլիկլինիկա», «Մաստեր Ֆարմ», «Բեռլին Պոլիկլինիկա», «Գուգարք Կենտրոնական պոլիկլինիկա», «Հրազդանի Բժշկական կենտրոն» և «Գորիս Բժշկական կենտրոն» բուժհաստատությունների հետ համատեղ կազմակերպեց արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի ժամանակահատվածում վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող Ընկերության թվով 392 աշխատողների համար բժշկական զննումներ (թերապևտի, նյարդաբանի, ակնաբույժի օտոլարինգոլոգի մաշկաբանի մոտ) և հետազոտություններ (ֆյուրոնկարահնում):

### 5.5. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 21 քրորակայանում, 8 պոմպակայանում, 2 ՋՄԿ-ում և 4 ԿՄԿ-ում: Ստուգայցի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսուսասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

2021 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



### 5.6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԻՆ-Ի ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ

● Համաձայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 14.10.2021 թվականի N° ՄՈ/443-2021 որոշմամբ հաստատված` ՀՀ Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանի պահանջների` հոկտեմբերի 20-ին Ընկերության «Հարավ» շահագործման տնօրինության «Էջմիածին» շահագործման տեղամասի մեկ վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող խումբ` իրեն ամրակցված գործիքների լրակազմով և մեքենայով, ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցել է ՀՀ Արմավիրի մարզի «Էջմիածնի արհեստագործական պետական ուսուսասարան» ՊՈԱԿ-ի կողմից անցկացված` «Հրդեհաշիջման և որոնողափրկարարական աշխատանքների իրականացումը ուսուսասական հաստատությունում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսուսասավարժությանը:

## 5.7. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

● Բաժինը, ելնելով համակարգերում տեխնաձին վթարների կանխարգելմանն և բացառմանն, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում իրականացրել է թվով 4 քլորակայանի տեխնիկական անվտանգության վկայագրի Հավատարմագրված մարմին հանդիսացող «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՄՊԸ-ի փորձագետների կողմից փորձաքննությունների իրականացման և եզրակացությունների ստացման աշխատանքները:

● Բաժինը, «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՄՊԸ-ի փորձագետների հետ համատեղ, պլան-ժամանակացույցի համապատասխան իրականացրել է թվով 65 ԱՎՕ-ի (քլորակայան, ամբարձիչ սարքավորում, մանիպուլյատոր հարմարանքով կահավորված հեղուկ քլոր տեղափոխող ավտոմեքենա) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



## 6.1 ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ

Հոկտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- SS վարչության աշխատակիցների ամբողջ խմբով անցկացվել են ամենօրյա խմբային քննարկումներ:
- Ինտերակտիվ համակարգում կատարվել են մի շարք աշխատանքներ՝ կապված ԱՏ տեղամասերի պետերի փոփոխությունների հետ:
- Ծրագրային աշխատանքներ են կատարվել՝ կապված պարտքերի գանձման հետ. հնարավորություն է տրվել գներացնելու երկու տարվա ժամանակացույց:
- Կատարվել են փոփոխություններ քարտեզային մոդուլի մեջ՝ ադապտացվել է Google պահանջներին:
- Աշխատանքներ են կատարվում Մարդկային ռեսուրսների կառավարման նոր մոդուլային համակարգի ներդրման ուղղությամբ:

● Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հոկտեմբեր ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություն			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	15	11.2	1.8
Էրեբունի	12	7.7	1.3
Շենգավիթ	14	9.1	1.6
Կենտրոն	4	7.4	1.3
Արաբկիր	16	7.1	1.3
Մաշտոց	9	4.2	0.7
Շահումյան	7	4.0	0.7
Քանաքեռ-Զեյթուն	23	11.5	1.8
ԱԿԲ	122	85.5	14.1
Շիրակ	23	9.9	1.6
Արթիկ	4	2.4	0.4
Արարատ	17	2.4	0.4
Աբովյան	15	6.9	1.1
Հրազդան	7	2.5	0.4
Ալավերդի	1	0.5	0.1
Արտաշատ	10	1.9	0.3
Բերդ	2	0.4	0.1
Գավառ	11	3.9	0.7
Գորիս	3	1.3	0.2
Եղեգնաձոր	5	5.5	0.8
Էջմիածին	14	10.2	1.7
Թալին	1	9.5	0.3
Իջևան	4	0.3	0.1
Մասիս	5	2.2	0.3
Մեղրի	1	0.3	0.0
Արմավիր	42	10.1	1.6
Սևան	3	1.0	0.2
Աշտարակ	8	2.1	0.3
Զարենցավան	7	4.0	0.7
Սիսիան	1	0.5	0.1
Սպիտակ	3	0.3	0.1
<b>Ընդամենը</b>	<b>409</b>	<b>226.0</b>	<b>35.9</b>

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հոկտեմբեր ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անսարթություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	11	4.31	43	0.39
Էրեբունի	9	5.66	30	0.22
Շենգավիթ	14	4.69	76	4.17
Կենտրոն	8	3.64	46	0.78
Արաբկիր	10	3.34	60	0.59
Մաշտոց	18	7.96	57	0.81
Շահումյան	21	5.80	40	0.37
Քանաքեռ-Զեյթուն	10	5.15	52	0.33
Լոռի	6	0.87	33	0.24
Շիրակ	6	2.21	22	0.15
Արթիկ	8	3.61	25	0.15
Արարատ	2	0.34	14	0.10
Աբովյան	2	1.12	8	0.69
Հրազդան	20	3.39	19	0.20
Ալավերդի	-	-	7	0.03
Աշոցք	2	0.75	9	0.05
Ապարան	5	1.46	1	0.00
Արտաշատ	1	0.26	12	0.07
Բերդ	1	0.19	10	0.05
Գավառ	4	1.81	46	0.63
Գորիս	2	0.64	5	0.41
Դիլիջան	1	1.55	5	0.01
Եղեգնաձոր	3	1.03	28	0.22
Էջմիածին	2	2.96	24	0.06
Թալին	1	0.30	-	-
Իջևան	3	0.21	14	3.98
Կապան	2	0.77	14	0.08
Ճամբարակ	1	0.11	2	0.00
Մասիս	13	6.13	28	0.22
Մարտունի	1	1.03	5	0.04
Մեղրի	1	0.26	-	-
Նոյեմբերյան	-	-	4	0.01
Արմավիր	1	0.13	47	0.50
Ջերմուկ	-	-	3	0.02
Սևան	6	2.11	10	0.06
Վայք	1	0.26	12	0.06
Աշտարակ	4	6.43	11	0.16
Զարենցավան	26	11.43	42	0.16
Սիսիան	1	0.26	5	0.02
Սպիտակ	1	0.13	8	0.03
Ստեփանավան	7	4.64	19	5.95
Տաշիր	-	-	3	0.01
<b>Ընդամենը</b>	<b>235</b>	<b>96.95</b>	<b>899</b>	<b>21.99</b>





«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am